



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՌԻԿՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՌԻՂԵՆԻՇՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Սիմոն Բաբայանի, խորհրդի անդամներ՝ Պավել Գյուլումյանի, Գայանե Դեմիրջյանի, Մանե Կարապետյանի, Ռուբեն Հակոբյանի, Արսեն Հարությունյանի, Լիլիթ Ղազանչյանի, Կարեն Մեժլումյանի և Մարինե Ֆարմանյանի,

քննության առնելով Ռինկնդիրների մասնագիտական ուսուցման և փաստաբանների վերապատրաստման գործընթացի կազմակերպման ուղենիշները հաստատելու հարցը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 45.4-րդ հոդվածի 12-րդ մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա» հիմնադրամի կանոնադրության 57-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջներով,

միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հաստատել Ռինկնդիրների մասնագիտական ուսուցման և փաստաբանների վերապատրաստման գործընթացի կազմակերպման ուղենիշները համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել «Փաստաբանների վերապատրաստման և հավակնորդների ուսուցման ծրագրերի ուղենիշները հաստատելու հարցը քննարկելու մասին» Պալատի խորհրդի՝ 05.08.2020թ. թիվ 16/13-Լ որոշումը:

ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝

Սիմոն Բաբայան

28 փետրվարի 2023թ.

թիվ 5/25-Լ

ք. Երևան